

և հոն կարճ միջոց մը մնալէ յետոյ կ'անցնի Սիւնիք:

Գրիգոր Կեսարացի իր այս երրորդ պատրիարքութեան ընթացքին, կարծես թէ աւելի զօրացած, խստութիւն կը բանեցնէ իր հակառակորդներուն դէմ (Ազգայադոմ էջ 2320): Ան կը շարունակէ իր հին ատելութիւնները և կը հալածէ բոլոր մրցակիցները, կամ անոնք որոնք ունէ կերպով հաւանականութիւն կը ներկայայնէին պատրիարքութեան թեկն ածելու:

Գարանաղցի, որ անգլիտակ էր անոր պատրիարքական աթոռը գրաւելուն, Կ. Պոլիս կուգայ Տրապիզոնի ճամբով, և նաւուն վրայ կը տեղեկանայ զինքն զիմաւորելու եկողներէն (տե՛ս էջ 167) թէ Կեսարացին Կ. Պոլիս բերուած է եւ կրկին պատրիարք եղած է եւ «Աե՛ծ խոռոյնքիսն աղևուկ արկեալ է ի ֆաղափս եւ հետ Յովհաննէս (Սուր) վարդապետիսն եւ զնա ի նեղ արկեր, ոչ յեկեղեցի կու բողոք մտանել եւ ոչ բոյլ կու տայ մարդոյ որ երթեակոյնսն առնել առնեալն ոք ընդ նա, ոչ յիւրոցն եւ ոչ յօտարաց, եւ քե՛ս ո՛րպիսի վիշտ հասոյց նա»:

Անոնք պարտք կը համարեն նաև Գարանաղցիին ըսելու թէ «Բե՛զ յորժամ ոք... կու յիշէ, կու խոռոյն չարացար, վասն այնորիկ չեմք իշխեր ի նորա երկիրդիսն անիցն ա-